ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1959 Общественные науки

Ա. Մ. Հակոբյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1951—1955 ԹԹ.)

Քննարկելով ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի վերաբերյալ ընկ. Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը, ՍՄԿՊ 21-րդ արտահերթ համագումարը մատնանշեց այն խոշոր հաջողությունները, որ ձեռք է բերել սովետական ժողովուրդը սոցիալիստական շինարարության տարիներին։

Համագումարը նշեց, որ մեր մեծ Հայրենիքի էկոնոմիկայի, կուլտուրայի և գիտության բուռն զարգացման հետ միասին, տեղի է ունեցել աշխատավորների կենսամակարդակի զգալի բարձրացում։ Համագումարի բանաձևում այդ մասին ասված է. «Սովետական երկիրը ունի հզոր, բազմակողմանիորեն զարգացած արդյունաբերություն և բարձր մեքենայացված գյուղատնտեսություն։ Սոցիալիստական էկոնոմիկայի ընդհանուր վերելքի հիման վրա անընդհատ աճում է երկրի հասարակական հարստությունը, բարձրանում են ժողովրդի նյութական բարեկեցությունն ու կուլտուրան։ Սովետական իշխանության տարիներին ազգային եկամուտը բնակչության մեկ շնչի հաշվով ավելացել է 15 անգամ։ Բանվորների և ծառայողների ռեալ եկամուտները, 1940 թվականի համեմատությամբ, ավելացան գրեթե երկու անգամ, իսկ գյուղացիների ռեալ եկամուտները, մեկ աշխատողի հաշվով, աճեցին ավելի քան երկու անգամ»[1]։

Աշխատավորների կենսամակարդակի բարձրացման գործում ձեռք բերած այդ հաջողությունների մեջ կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ հնգամյա պլանի (1951—1955 թթ.) հաջող կատարումը։

Սովետական Միության արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման զուգընթաց, հինգերորդ հնգամյակի տարիներին տեղի ունեցավ երկրի աշխատավորների նյութական կենսամակարդակի հետագա բարձրացում։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը՝ մշտապես մեծ հոգատարություն ցուցաբերելով սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման նկատմամբ, հնգամյակի տարիներին այդ ուղղությամբ կիրառեցին մի շարք միջոցառումներ։

Այդ միջոցառումների շարքում կարևորագույն նշանակություն ունեցավ մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների չորս անգամ իջեցումը հնգամյակի տարիներին։ Դրա շնորհիվ մասսայական սպառման ապրանքների գները 1954 թ. 26%-ով ավելի ցածր էին, քան 1950 թ.։ Այդ նշանակում է, որ սովետական ժողովուրդը հարյուրավոր մեկարդ ռուբլի շա-

[1] «Սովետական Հայաստան», 7 փետրվարի, 1959։

հում էր ունեցել, որ զգալի չափով բարձրացել էր բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը։ Դրա հետ միասին տեղի էր ունեցել կոլտնտեսականների ռեալ եկամուտի ավելացում։ Խոշոր չափով աճել էր ժողովրդական սպառման ծավալը։ Երկրի բնակչությունը պետական և կոոպերատիվ առևտրի ցանցից 1955 թ. 1,9 անգամ ավելի ապրանքներ էր գնել, քան 1950 թ.։ Այդ ժամանակամիջոցում մի շարք կարևորագույն ապրանքների վաճառքի աճը տեղի էր ունեցել հետևյալ չափով, մսինը՝ 220, ձկանը՝ 185, կենդանական յուղինը՝ 158, հագուստեղենինը և սպիտակեղենինը՝ 198, կոշկեղենինը՝ 168, կահույքինը՝ 307 տոկոսով[2] և այլն։

Հնգամյակի տարիներին Սովետական պետության կողմից կապիտալ ներդրումները բնակարանային շինարարության մեջ կազմեցին մոտ 100 միլիարդ ռուբլի, կամ 2,2 անգամ ավելի, քան նախորդ հնգամյակի տարիներին։ Քաղաքներում և բանվորական ավաններում կառուցվեցին 154 միլիոն քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի շենքեր։ Բացի դրանից, աշխատավորները իրենց միջոցներով գյուղերում կառուցեցին 2,3 միլիոն անհատական բնակելի տներ։ Հնգամյակի տարիներին Սովետական կառավարությունը միայն սոցիալական ապահովության, կենսաթոշակների, ուսանողների թոշակների, սանատորիաների ուղեգրերի, բանվորների ու ծառայողների արձակուրդների, առողջապահության և այդ կարգի մյուս միջոցառումների վրա ծախսել է 689 միլիարդ ռուբլի[3]։

Սովետական կառավարությունը հնարավորություն ունեցավ այդպիսի խոշոր միջոցներ ծախսել ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման նպատակով շնորհիվ այն բանի, որ հնգամյակի տարիներին արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետագա զարգացումը մեծ չափով ավելացրել էր ՍՍՌՄ-ի ազգային եկամուտը։ ՍՄԿՊ 20-րդ համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ այդ մասին ասված է.

«Արդյունաբերության և գյուղատնտեսության աճի հիման վրա սովետական ժողովրդի կենսամակարդակի անշեղ վերելք է տեղի ունեցել։ Հինգերորդ հնգամյակի տարիներին ՍՍՌՄ-ի ազգային եկամուտը,— իսկ հայտնի է, որ այդ եկամտի երեք քառորդը մեզանում գնում է բնակչության անձնական պահանջմունքների բավարարման համար,— ավելացել է 68 տոկոսով։ Այդ ժամանակամիջոցում բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը աճել է 39 տոկոսով, իսկ կոլտնտեսականների ռեալ եկամուտները՝ 50 տոկոսով»[4]։

Հինգերորդ հնգամյակի տարիներին աշխատավորների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ զգալի հաջողություններ էին ձեռք բերվել նաև Սովետական Հայաստանում։

Տեղի էր ունեցել ռեսպուբլիկայի պետական բյուջեի հետագա զգալի աճում։ Եթե չորրորդ հնգամյակի ընթացքում Սովետական Հայաստանի բյուջեի եկամտային մասը կազմել է 5.435,1 միլիոն ռուբլի, ապա հինգերորդ հնգա-

---

[2] Տե՛ս Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի 20-րդ համագումարին, Երևան, 1956, էջ 108։

[3] Նույն տեղում, էջ 107—108։

[4] Նույն տեղում, էջ 107։

մակի ընթացքում, այն հասել էր 6.295.7 միլիոն ռուբլու[5]։ Այդ գումարի խոշոր մասը ծախսվել է բնակչության առողջապահության բարելավման, բնակարանային և այլ կարիքների համար։

Ինչպես ամբողջ Սովետական Միության, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանի աշխատավորների կենսամակարդակի բարձրացման գործում կարևորագույն նշանակություն ունեցան ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումները մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների իջեցման մասին։ Պարտիայի Կենտկոմը և Սովետական կառավարությունը այդպիսի որոշումներ ընդունեցին 1951 թ. մարտին, 1952, 1953 և 1954 թվականների ապրիլին։ 1951 թ. մասսայական ապրանքների մանրածախ գների իջեցման շնորհիվ, հօգուտ ժողովրդի պետական բյուջեից միայն մի տարում պակասեց 27,5 միլիարդ ռուբլի, իսկ կոլտնտեսային շուկայում տեղի ունեցած գների համապատասխան իջեցման շնորհիվ ժողովուրդը շահեց ևս 7 միլիարդ ռուբլի, ընդամենը՝ 34,5 միլիարդ ռուբլի։ 1953 թ. ապրիլին տեղի ունեցած գների իջեցման շնորհիվ սովետական ժողովուրդը տարեկան ստացավ առնվազը 53 միլիարդ ռուբլու օգուտ[7]։ Ժողովուրդը այդպիսի շահույթներ ստացավ նաև 1952 և 1954 թթ. տեղի ունեցած գների իջեցման շնորհիվ։

Մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների այդ իջեցումները հարյուր միլիոնավոր ռուբլու օգուտ տվին նաև Սովետական Հայաստանի բնակչությանը։

Ինչպես նշված է ՀԿՊ 18-րդ համագումարում Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ «հնգամյակի ընթացքում պետական մանրածախ գների սիստեմատիկ իջեցման շնորհիվ ռեսպուբլիկայի բնակչության շահույթը միայն 1955 թվականին, 1950 թվականի գների համեմատությամբ, կազմեց մոտավորապես 1 միլիարդ 230 միլիոն ռուբլի»[8]։

Ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, Սովետական Հայաստանի աշխատավորները ևս մեծ խանդավառությամբ ընդունեցին ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի վերոհիշյալ որոշումները։ Տեղի ունեցած միտինգներում ռեսպուբլիկայի աշխատավորները ջերմորեն ողջունում էին այդ որոշումները, շնորհակալություն հայտնում ժողովրդի նկատմամբ ցուցաբերած այդպիսի մեծ հոգատարության համար և պարտավորվում էին իրենց անձնվեր աշխատանքով արտադրական նոր սխրագործությունների հասնել։ 1952 թ. ապրիլի 2-ին Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի աշխատավորների միտինգում ստախանովական բրիգադիր Պ. Պապյանն իր ելույթում ասել է. «Պարենային ապրանքների գների իջեցումը աշխատավորների կենսամակարդակի բարձրացման նկատմամբ Սովետական կառավարության և բոլշևիկների պարտիայի ջերմ հոգատարության նոր արտահայտությունն է։ Կառավարության և պարտիայի այս նոր որոշման շնորհիվ զգալիորեն կբարձրանա աշխատավորների ռեալ աշխատավարձը, է՛լ ավելի կկայունանա սովետական ռուբլին»[9]։

---

[5] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник. стр. 171--172.

[6] Տե՛ս «Պրավդա», 1 մարտի, 1951։

[7] Նույն տեղում, 2 ապրիլի, 1953։

[8] Ս. Հ. Թոմասյան, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ 18-րդ համագումարին, էջ 76։

[9] «Սովետական Հայաստան», 4 ապրիլի, 1952։

1953 թ. ապրիլին տեղի ունեցած մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների իջեցման մասին պարտիայի Կենտկոմի և Սովետական կառավարության որոշման առթիվ տեղի ունեցած միտինգում Երևանի Ֆ. Ջերժինսկու անվան դաղդահաշինական գործարանի հնագույն և անվանի բանվոր Հ. Դիլանյանն իր ելույթում ասել է. «Ջերմ հոգատարությանը մենք կպատասխանենք արտադրական նորանոր հաջողություններով. կմեծացնենք մեր ավանդը կոմունիստական հասարակարգի կառուցման գործում, կնպաստենք մեր երկրի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը, գիտակցելով, որ որքան հզոր ու անպարտելի լինի մեր երկիրը, այնքան առատ, ունևոր ու երջանիկ կլինի մեր կյանքը»[10]։

Խոսելով մասսայական սպառման ապրանքների գների իջեցման և յուրաքանչյուր աշխատավորի համար նրա մեծ նշանակության մասին, Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի նշանավոր խառատ Կ. Զարքչյանն ասել է. «Ես ավելի քան 11 տարի է, ինչ աշխատում եմ էլեկտրատեխնիկական գործարանում որպես խառատ։ Իմ ընտանիքը բաղկացած է հինգ անձից. ես լինելով միակ աշխատողը, այնքան աշխատավարձ եմ ստանում, որ երջանիկ կյանք ենք վարում։ Գների նոր իջեցման շնորհիվ մեր ընտանիքն ամսական կխնայի 200—220 ռուբլի։ Այդ նշանակում է, որ մեր եկամուտը տարեկան կավելանա ավելի քան 2.500 ռուբլով։

Պարտիայի և կառավարության որոշումը աշխատանքային մեծ վերելք է առաջացրել մեր գործարանում... Ես իմ առաջադրանքը կատարում եմ 300—350 տոկոսով»[11]։

ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումները գների իջեցման մասին մեծ խանդավառությամբ է ընդունում նաև Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը։ Այդ որոշումներին նրանք նույնպես պատասխանում են աշխատանքային նոր վերելքով։

Հնգամյակի տարիներին Կոմունիստական պարտիայի Կենտկոմը և Սովետական կառավարությունը մի շարք կարևոր որոշումներ են ընդունում նաև առևտրական ցանցի աշխատանքների բարելավման, մասսայական սպառման ապրանքների որակի բարձրացման, նրանց արտադրանքը ընդարձակելու հարցերի մասին։

Մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների պարբերական իջեցումները և դրա հետ միասին ռեսպուբլիկայի աշխատավորների ռեալ աշխատավարձի ու եկամուտների աստիճանական ավելացումը զգալի չափով բարձրացրին աշխատավորության գնողունակությունը։ Այդ են ապացուցում հինգերորդ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում պետական ու կոոպերատիվ առևտրի և հասարակական սննդի ցանցի զգալի ընդարձակումը և ապրանքաշրջանառության հետագա ծավալումը։ Այդ տարիներին Հայաստանի տարբեր շրջաններում բացվում են հարյուրավոր նոր խանութներ ու կրպակներ։

Եթե 1950 թ. ռեսպուբլիկայում մանրածախ ապրանքաշրջանառության գումարը կազմել է 2.370 միլիոն ռուբլի, ապա 1951 թ. այն եղել է 2.408 միլիոն ռուբլի, 1953 թ.՝ 2.605 միլիոն ռուբլի, իսկ 1955 թ. հասել էր 3.072 միլիոն ռուբլու[12]։

---

[10] «Սովետական Հայաստան», 4 ապրիլի, 1953։

[11] Նույն տեղում։

[12] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, стр. 125—126.

Պետական և կոոպերատիվ առևտրական կազմակերպությունների կողմից լայն սպառման ապրանքների մի շարք կարևոր տեսակների վաճառքի աճումը բնակչությանը 1955 թվականին կազմել է 1953 թվականի համեմատությամբ, բրդե գործվածքներ՝ 36,5, մետաքսե գործվածքներ՝ 16,7, կարվածքեղեն՝ 58,1, կոշկեղեն՝ 15,5, ալյումինե ամանեղեն՝ 81,4 տոկոս, իսկ սենդամթերքների գծով՝ միս՝ 15,5, երշիկեղեն՝ 7,6, կաթնամթերք՝ 97, մարգարին՝ 25,8, ձկնեղեն՝ 16,4, հրուշակեղեն՝ 13,4 տոկոսով[13] և այլն։ Նույն ժամանակամիջոցում կոլտնտեսային շուկայում մսի վաճառքի աճը կազմել է 19, կաթնամթերքինը՝ 68,6, բանջարեղենինը՝ 49, մրգեղենինը՝ 50, կարտոֆիլինը՝ 60 և բոստանային կուլտուրաներինը՝ 51 տոկոս[14]։

Բերված թվերը ակնառու կերպով ցույց են տալիս, թե հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայի աշխատավորների գնողունակության ինչպիսի բարձրացում էր տեղի ունեցել, որը միաժամանակ հանդիսանում է նրանց պահանջարկի և կենսամակարդակի բարձրացման վկայությունը։

Չնայած պետական և կոոպերատիվ մանրածախ առևտրի ցանցի ընդարձակմանը և ապրանքաշրջանառության ծավալմանը, ամբողջությամբ վերցրած առևտրի բնագավառում ձեռք բերած զգալի հաջողություններին, այդ գործում դեռևս գոյություն ունեին մի շարք լուրջ թերություններ։ Այդ մասին Հայաստանի Կոմունիստական պարտիայի 18-րդ համագումարի բանաձևում ասված է. «Խոշոր թերություններ կան առևտրի և հասարակական սնդի ասպարեզում։ Ռեսպուբլիկայի առևտրական կազմակերպությունները դեռևս իրենց աշխատանքը չեն վերակառուցել քաղաքի և գյուղի բնակչության աճող պահանջներին համապատասխան, անբավարար են հաշվի առնում բնակչության պահանջարկը և խիստ պահանջկոտություն չեն ցուցաբերում արդյունաբերության նկատմամբ՝ թողարկվող լայն սպառման ապրանքների որակի բարձրացման գործում։ Ցածր է առևտրի կուլտուրան»[15]։

Նշելով այդ թերությունները, համագումարը միևնույն ժամանակ մշակեց կոնկրետ միջոցառումներ նրանց վերացման համար, որոնք կարևոր դեր խաղացին ռեսպուբլիկայում պետական և կոոպերատիվ առևտրի հետագա բարելավման ու զարգացման գործում։

Բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի պետության կողմից աշխատավորներին ցույց տրվող բժշկական օգնությունը, առողջապահության ցանցի ընդարձակումը, բժշկական օգնության լավագույն կազմակերպումը։ Շնորհիվ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության՝ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող մշտական հոգատարությանը, հնգամյակի տարիներին աչքի ընկնող տեղաշարժեր կատարվեցին Սովետական Հայաստանի աշխատավորների առողջապահության բարելավման գործում։ Տարեց-տարի ավելացել են պետության կողմից այդ բնագավառի համար կատարված ֆինանսական հատկացումները։ Այսպես, եթե պետական բյուջեից առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի համար

---

[13] Տե՛ս Ս. Հ. Թովմասյան, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ 18-րդ համագումարին, էջ 71։

[14] Տե՛ս նույն տեղում։

[15] Հայաստանի Կոմունիստական պարտիայի 18-րդ համագումարի բանաձևը Հայաստանի ԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, էջ 11։

1951 թ. հատկացվել է 43,5 միլիոն ռուբլի, ապա 1955 թ. այդ գումարը հասել էր 50,2 միլիոն ռուբլու[16]։ Իսկ ամբողջ հնգամյակի ընթացքում առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի համար միայն ռեսպուբլիկական բյուջեից հատկացվել է 218,0 միլիոն ռուբլի[17]։ Բացի դրանից, հսկայական գումարներ են հատկացվել նաև տեղական բյուջեից։ 1951 թ. տեղական բյուջեից այդ գործին հատկացվել է 118,8 միլիոն ռուբլի, 1955 թ.՝ 150,2 միլիոն ռուբլի, իսկ ամբողջ հնգամյակի ընթացքում 652,1 միլիոն ռուբլի, չորրորդ հնգամյակի 462,2 միլիոն ռուբլու դիմաց[18]։ Այսպիսով, հնգամյակի տարիներին միայն առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի զարգացման նպատակների համար պետական և տեղական բյուջեից հատկացվել է 870,1 միլիոն ռուբլի։

Այդ գումարի հաշվին ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում զգալի չափով ընդարձակվեց բուժարանների, հիվանդանոցների և առողջապահական այլ հաստատությունների ցանցը, ավելացավ նրանցում աշխատող բուշկա-սանիտարական աշխատողների, հատկապես բժիշկների թիվը։ Ինչպես նշեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի 16-րդ համագումարը, 1951—1952 թթ. Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում կազմակերպվեցին երեք նոր հիվանդանոցներ։ Մի շարք շրջաններում, այդ թվում՝ Աշտարակում, Մեղրիում, Կամոյում, Սիսիանում, Գորիսում, Կալինինոյում և այլ գյուղական տեղամասային բուժարաններին կից հիվանդանոցներ կազմակերպվեցին։ Այդ ժամանակամիջոցում հիվանդանոցային մահճակալների քանակը ամբողջ ռեսպուբլիկայում ավելացել էր 8 տոկոսով, իսկ գյուղում ծննդաբերական մահճակալների քանակը ավելացել էր 40 տոկոսով։ Միաժամանակ կանանց և մանկական կոնսուլտացիաների և հիվանդանոցներում երեխաների մահճակալների քանակը ավելացել էր 22 տոկոսով[19]։

ՀԿՊ 16-րդ համագումարում ՀԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ բնակչության բուժսպասարկման գործի բարելավման մասին ասված է. «Առողջապահության մինիստրությունը հաջողությամբ իրականացնում է մասնագիտացված բուժօգնությունը ռեսպուբլիկայի շրջաններում՝ կազմակերպելով ռենտգենյան բաժանմունքներ, կլինիկա-դիագնոստիկական լաբորատորիաներ, վիրաբուժական բաժանմունքներ և ականջի, քթի-կոկորդի հիվանդությունների կաբինետներ։ Վերջին մեկ և կես տարվա ընթացքում (այսինքն 1951 թ. մինչև 1952 թ. կեսերը — Ա. Հ.) քաղաքներից գյուղական շրջաններն են ուղարկվել 215 բժիշկ։ Գյուղի բուժսպասարկումը ուժեղացնելու շնորհիվ մեծ չափով նվազել են մալարիայով և ինֆեկցիոն այլ հիվանդություններով հիվանդանալու դեպքերը»[20]։

Հաշվի առնելով ռեսպուբլիկայի աշխատավորների առողջապահության կազմակերպման գործում ձեռք բերած այդ հաջողությունները, Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրերով 1952թ. մայիսին և 1953 թ. հոկտեմբերին Սովետական Հայաստանի առողջապահության ճակատի աշխատողներից երկու մեծ խումբ երկարամյա անբասիր աշխատանքի

[16] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, стр. 174.

[17] Նույն տեղում։

[18] Նույն տեղում, էջ 175—176։

[19] Տես Գր. Հարությունյան, Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ 16-րդ համագումարին ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1952, էջ 69—70։

[20] Նույն տեղում, էջ 70։

համար պարգևատրվում են Սովետական Միության շքանշաններով և մեդալներով։

Սակայն, այդ բոլորին զուգընթաց, առողջապահության ցանցում և աշխատավորության բժշկական օգնության գործում դեռևս դոյություն ունեին լուրջ թերություններ։ ՀԿՊ նույն համագումարը նշեց, որ ցածր է հիվանդներին դիպանողելու գործի մակարդակը, բնակչության բուժսպասարկման որակը, հատկապես անբավարար է մասնագիտական բուժօգնության գործը, գյուղում դեռևս զգալի պակաս է զգացվում բարձրորակ բժշկական կադրերի և այլն։ Նշելով առողջապահության գործում եղած այդ և մի շարք այլ թերություններ համագումարը պարտիական կազմակերպությունների և առաջին հերթին առողջապահության ֆրոնտի աշխատողների առջև խնդիր դրեց վերացնել այդ թերությունները և նոր հաջողությունների հասնել աշխատավորների բուժսպասարկման ասպարեզում։

Իրոք, հնգամյակի հետագա տարիներին հաջողություններն այդ գծով ավելի ակնառու դարձան։ Տեղի ունեցավ առողջապահական հաստատությունների ցանցի հետագա ընդարձակում և նրանց աշխատանքների բարելավում։ 1954—1955 թվականներին կազմակերպվեցին գյուղական տեղամասային 19 նոր հիվանդանոցներ, 4 նոր սանատորիա։ 1953 թ. համեմատությամբ 1955 թ. հիվանդանոցների մահճակալների քանակն ավելացել էր 17 տոկոսով։ Որոշ չափով բարձրացել էր բնակչության բուժսպասարկման որակը։

Աշխատավորների նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցաբերվող մշտական հոգատարության շնորհիվ հինգերորդ հնգամյակի տարիներին առողջապահության բնագավառում ձեռք բերած հաջողությունների մասին հիմնական պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Եթե չորրորդ հնգամյակի վերջում՝ 1950 թ., Հայաստանում հիվանդանոցային մահճակալների (առանց հոսպիտալների) քանակն եղել էր 6.467, ապա հինգերորդ հնգամյակի վերջում, այսինքն՝ 1955 թ., նրանց քանակը հասել էր 9.327-ի։ Այդ նույն ժամանակամիջոցում բժիշկների թիվը 2.575-ից հասել էր 3.356-ի, միջնակարգ կրթություն ունեցող բժշկական անձնակազմի թիվը 4.556-ից 7.017-ի[21]։ Առանձնապես զգալի չափով ավելացել էր գյուղական վայրերում և շրջաններում աշխատող բժիշկների և բժշկական անձնակազմի թիվը։ Աղջնի շրջանում, եթե 1950 թ. աշխատել էր 7 բժիշկ, ապա 1955 թ. նրանց թիվը հասել էր 15-ի, Ղափանի շրջանում՝ 36-ից 52-ի, Կոտայքի շրջանում՝ 35-ից 53-ի, Սիսիանի շրջանում՝ 14-ից 20-ի, Թալինի շրջանում՝ 13-ից 20-ի, Կրասնոսելսկի շրջանում՝ 11-ից 17-ի և այլն[22]։

Հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում որոշ չափով ավելացել էր սանատորիաների և հանգստյան տների քանակը և բարելավվել նրանց աշխատանքը։ 1950 թ. Հայաստանում եղած 13 սանատորիայի փոխարեն 1955 թ. արդեն կար 21 սանատորիա։ Բացի դրանից, 1955 թ. Հայաստանում գործում էին 8 հանգստյան տուն։ Մահճակալների քանակը սանատորիաներում և հանգստյան տներում 1950 թ. եղել է 3.109, իսկ 1955 թ. հասել էր 3.678-ի[23]։ Զգալի չափով աճել էին մանկական սանատորիաները և նրանցում բուժվող երեխաների թիվը։

[21] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, стр. 165.
[22] Նույն տեղում, էջ 166։
[23] Նույն տեղում, էջ 168։

Առանձնապես խոշոր զարգացում ապրեցին Ջերմուկ և Արզնի կուրորտները, որոնք ունեն միութենական նշանակություն։

Բնակչության նյութական կենսամակարդակի բարձրացման և առողջապահության գործի բարելավման շնորհիվ հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայում պակասեցին էպիդեմիկ հիվանդությունները, նվազեց մահացողների քանակը և զգալի չափով բարձրացավ բնակչության բնական աճը։ Այսպես, եթե 1950 թ. յուրաքանչյուր 1000 մարդուց մահացել էր 8,4 և ծնվել 31,5 մարդ, ապա 1954 թ. յուրաքանչյուր 1000 մարդուց մահացածների թիվը կազմել է 8, իսկ ծնվածների թիվը բարձրացել և հասել էր 37,9-ի։ Ազգաբնակչության բնական աճը յուրաքանչյուր 1000 մարդուց 1950 թ. եղել է 23,1, իսկ 1955 թ՝. 28,7[24]։

Հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում հետագա զարգացում ստացան բնակարանային շինարարությունը և կոմունալ տնտեսությունը, որոնք կարևոր նշանակություն ունեն աշխատավորների կենսամակարդակի բարձրացման համար։ Տարեց-տարի աճեցին Սովետական կառավարության ներդրած գումարները բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության զարգացման գործում։ Այդ նպատակի համար պետական և տեղական բյուջեներից հատկացվել է 1951 թ. 171 միլիոն ռուբլի, իսկ 1955 թ. այդ հատկացումների գումարը հասել էր 193,3 միլիոն ռուբլու[25]։ Ամբողջ հինգերորդ հնգամյակի տարիներին պետական, ռեսպուբլիկական և տեղական բյուջեներից բնակարանային շինարարությանը և կոմունալ տնտեսությանը հատկացվել է 698 միլիոն ռուբլի[26]։ Այդ միջոցներով կառուցվել և շահագործման է հանձնվել 611 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, այդ թվում՝ 1951 թ. 120 հազար քառակուսի մետր, իսկ 1955 թ. 156 հազար քառակուսի մետր։ Սովետական պետության կողմից տասնյակ հազարավոր աշխատավորների՝ արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության առաջավորների, ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների ընտանիքների հատկացվեցին ժամանակակից պահանջներին համապատասխան կառուցված նոր ու գեղեցիկ բնակարաններ։

Բացի Սովետական կառավարության կողմից ծավալած բնակարանային այդպիսի հսկայական շինարարությունից, հնգամյակի տարիներին, շնորհիվ աշխատավորների նյութական կենսամակարդակի հետագա բարձրացման, քաղաքներում և գյուղական վայրերում տեղի ունեցավ անհատական բնակարանային լայն շինարարություն։ Անհատական շինարարության գծով կառավարության օգնությամբ քաղաքներում և յանվորական ավաններում 1951—1955 թթ. կառուցվեց և շահագործման հանձնվեց 475 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, իսկ գյուղական վայրերում՝ 25,8 հազար նոր բնակարաններ[27]։

Հետպատերազմյան շրջանում, և հատկապես հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում տեղի ունեցավ քաղաքների և քաղաքատիպ ավանների հետագա զարգացում։ Ավելացավ նրանց քանակը, բնակչության թիվը և շնորհիվ արդյունաբերության զարգացման, մի շարք նոր, կարևոր

[24] Նույն տեղում, էջ 165։
[25] Նույն տեղում, էջ 172 և 176։
[26] Նույն տեղում, էջ 172, 175 և 176։
[27] Նույն տեղում, էջ 107։

ճյուղերի ստեղծման, զգալի չափով մեծացավ նրանց տեսակարար կշիռը։ Հայրենական պատերազմի նախօրյակին 1940 թ. Հայաստանում կար 9 քաղաք՝ Երևան, Լենինական, Կիրովական, Ալավերդի, Էջմիածին, Կամո, Ստեփանավան, Գորիս և Ղափան։ Հետագայում արագորեն աճեցին և քաղաքների վերածվեցին նաև Արթիկը, Հոկտեմբերյանը և Դիլիջանը։ Այսպիսով հինգերորդ հնգամյակում Հայաստանում արդեն կար 12 քաղաք, որոնցից երեքը՝ Երևանը՝ Լենինականը և Կիրովականը ռեսպուբլիկական ենթակայության քաղաքներ էին, իսկ մյուսները՝ շրջանային ենթակայության։

Հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ավելի քան 50 խոշոր և բազմաթիվ միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկություններ։ Հսկայական շինարարական աշխատանքներ կատարվեցին ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունների, այլև գիտության ու կուլտուրայի օջախների, կոմունալ տնտեսության և բնակարանային շինարարության գծով։

Դրա գեղեցիկ օրինակը հանդիսանում է Երևանը։

1951 թ. վերջերին մայրաքաղաքի հասարակության լայն քննարկմանը դրվեց Երևան քաղաքի զարգացման 15-ամյա պլանի նախագիծը։ Այդ քննարկման շնորհիվ մի շարք ճշտումներ և ավելացումներ կատարվեցին նախագծի մեջ։ Նույն թվականի դեկտեմբերին աշխատավորների Երևանի Քաղաքային Սովետի 6-րդ սեսիան հաստատեց մայրաքաղաքի զարգացման 15-ամյա պլանը։

Այդ պլանի իրականացման շնորհիվ Երևանում հետագա զարգացում ապրեց էլեկտրամեքենաշինությունը, հաստոցաշինությունը, քիմիական, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերությունը։ Ստեղծվեցին արդյունաբերական մի շարք նոր ձեռնարկություններ։ Խոշոր չափով աճեցին մայրաքաղաքի բանվորական թաղամասերը՝ Արաբկիրը, Ջեյթունը, Վարդաշենը, Կիլիկիան, Նոր-Արեշը, Կանաքը, Քանաքեռագեսը և այլն։

Մայրաքաղաքի գլխավոր փողոցներում՝ Լենինի, Ստալինի, Օրջոնիկիձեի, Հոկտեմբերյան պողոտաների վրա և այլ փողոցներում ու մասերում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին բազմաթիվ պետական, հասարակական ու բնակելի շենքեր։ Խոշոր աշխատանքներ կատարվեցին Երևանի գեղեցկությունը կազմող Լենինի անվան հրապարակի ճարտարապետական անսամբլի կառուցումն ավարտելու ուղղությամբ։ Բացի դրանից, մայրաքաղաքում ավարտվեց Հայֆիլհարմոնիայի Համերգային մեծ դահլիճի կառուցումը, որը շահագործման հանձնվեց 1953 թ. հունիսին։ Այդ դահլիճը կազմում է ճարտարապետության ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախագծով կառուցված Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան պետական օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի դեղեցիկ շենքի մի մասը։ Դրանով իսկ ավարտվեց այդ խոշոր շինարարության կառուցումը, որը սկսված էր դեռևս 1920-ական թվականների վերջերին։ 1952 թ. տեղի է ունենում Երևանի փակ շուկայի շինարարության ավարտումը և նրա բացումը։

Հինգերորդ հնգամյակի տարիներին շինարարական խոշոր աշխատանքներ կատարվեցին նաև Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում, Էջմիածնում, Արթիկում, Հոկտեմբերյանում և այլ քաղաքներում ու բաղաքատիպ ավաններում։

Չնայած շինարարության այդպիսի ծավալմանը և նրա հաջողություններին, նրանում դեռևս գոյություն ունեին մի շարք լուրջ թերություններ։ Այդ մասին Հայաստանի Կոմունիստական պարտիայի 18-րդ համագումարում (1956 թ. հունվար) ՀԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ընդունված բանաձևում ասված է. «Լուրջ թերություններ ու սխալներ կան նախագծման և շինարարության գործում։ Թույլ են տրվում ճարտարապետական շռայլություններ, դանդաղ են արմատավորվում շինարարության ինդուստրիալ մեթոդները, դեռևս արմատախիլ չեն արվել օրյեկտները մեծ պակասություններով շահագործման հանձնելու փաստերը։ Չնայած բնակարանային ու կուլտուր-կենցաղային շինարարության համար հատկացումների ավելացմանը, ռեսպուբլիկայում տնբավարար է կատարվում բնակելի շենքերի և կուլտուր-կենցաղային օրյեկտների շինարարությունը»։[28]

Համագումարը միաժամանակ նշեց գործնական միջոցառումներ այդ թերությունների վերացման համար։

Քաղաքների զարգացման գուգընթաց, տեղի էր ունեցել կոմունալ-կենցաղային ձեռնարկությունների ընդարձակում և բնակչության կոմունալ սպասարկման հետագա բարելավում։ Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին եթե միայն Երևանը ուներ ջրմուղի ցանց, ապա հինգերորդ հնգամյակի վերջում բոլոր 12 քաղաքներն ունեին ջրմուղ, որի մի մասը անց էր կացվել նախապատերազմյան տարիներին, իսկ մյուս մասը՝ հետպատերազմյան շրջանում, հատկապես 1951—1955 թվականներին։ Քաղաքների մեծ մասում անց էր կացվել կոյուղի, խոշոր չափով ընդարձակվել էր կենցաղային սպասարկման և կապի ցանցը։ Բոլոր քաղաքներն ապահովված էին հեռախոսային կայաններով, որից 9-ը՝ ավտոմատ։

Շնորհիվ ավտոմոբիլային տրանսպորտի արագ զարգացման, ռեսպուբլիկայի քաղաքները միմյանց հետ և գյուղերի հետ կապված են մարդատար և ապրանքատար ավտոմեքենաների տրանսպորտով։ Եթե ապրանքատար ավտոմեքենաներով 1950 թ. ռեսպուբլիկայում փոխադրվել է 12,5 միլիոն տոննա բեռ, ապա 1955 թ. այն հասել է 27,9 միլիոն տոննայի, այսինքն՝ ավելի քան կրկնապատկվել էր, իսկ 1940 թ. համեմատությամբ ավելացել էր 6.7 անգամ[29]։ 1950 թ. Հայաստանում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել էր 9.962 հազար, իսկ 1955 թ. 38.898 հազար մարդ, այսինքն՝ մոտ 4 անգամ ավելացում էր տեղի ունեցել[30]։

Հնգամյակի տարիներին մայրաքաղաքում խոշոր չափով ավելացել էին տրամվայի և տրոլեյբուսի գծերը, տրամվայների և տրոլեյբուսների քանակը և ավտոբուսային պարկը։ Մեծ չափով ավելացել էին ավտոբուսային, տակսոմոտորային պարկերը նաև մյուս քաղաքներում ու շրջաններում։

Հինգերորդ հնգամյակի վերջում էլեկտրիֆիկացված էին ռեսպուբլիկայի բոլոր քաղաքները և գյուղական բնակավայրերի 83 տոկոսը։ Էլեկտրական էներգիան լայն կերպով օգտագործվում էր բնակչության կենցաղային կարիքների սպասարկման համար։

---

[28] Հայաստանի Կոմունիստական պարտիայի 18-րդ համագումարի բանաձևեր Հայաստանի ԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, էջ 8։

[29] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, էջ 112։

[30] Նույն տեղում, էջ 113։

Արդյունաբերության և շինարարության բուռն զարգացման, ռեսպուբլիկայի քաղաքների քանակի ավելացման և նրանց տնտեսական հզորացման զուգընթաց, տեղի էր ունեցել քաղաքների բնակչության խոշոր աճ։ Այսպես, եթե Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայի վրա քաղաքների բնակչությունը 1913 թ. կազմել է բնակչության ընդհանուր քանակի միայն 10,4, իսկ 1926 թ.՝ 19, ապա 1956 թ. սկզբին՝ 44,4 տոկոսը[31]։

Առանձնապես խոշոր չափով աճել էր Երևան, Լենինական և Կիրովական քաղաքների բնակչությունը։ Եթե 1939 թ. Երևանի բնակչության թիվը եղել է 200 հազար, ապա 1956 թ. հասել էր 385 հազարի, համապատասխանաբար Լենինականի բնակչությունը 68 հազարից հասել էր 103 հազարի, Կիրովականինը՝ 18 հազարից 41 հազարի[32]։ Բնակչության խոշոր աճում էր տեղի ունեցել նաև ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում։ Ըստ որում քաղաքների բնակչության այդպիսի աճումը տեղի էր ունեցել մեկ կողմից բնակչության բնական աճի և Սփյուռքից Հայրենիք ներգաղթած հայ աշխատավորության հաշվին, մյուս կողմից գյուղից քաղաք եկած աշխատավորների հաշվին, որոնք համալրել են ծավալվող շինարարության և զարգացող արդյունաբերության, տրանսպորտի ու ժողովրդական մյուս ճյուղերի կադրերի մեծ պակասը։

Ռեսպուբլիկայի ընդհանուր բնակչության մեջ քաղաքների բնակչության տեսակարար կշռի այդպիսի ավելացումը պետք է բացատրել նրանով, որ զգալի չափով ավելացել էր քաղաքների քանակը, նախկին մեծ գյուղերը, ինչպես օրինակ՝ Արթիկը, Հոկտեմբերյանը, Դիլիջանը, Ալավերդին, Ղափանը և այլն աճելով և զարգանալով, վեր էին ածվել քաղաքների։

Հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում բազմաթիվ արդյունաբերական նոր ձեռնարկություններ կառուցման և գործարկման, եղածների ընդլայնման, երկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման և հսկայական շինարարության ծավալման զուգընթաց, տեղի ունեցավ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների և ծառայողների թվի խոշոր աճում։ Դրա մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ 1928 թ. Սովետական Հայաստանում բանվոր-ծառայողների տարեկան միջին թիվը եղել է 42.473[33], 1940 թ.՝ 142,2 հազար, 1950 թ.՝ 233,7 հազար, իսկ հնգամյակի վերջին տարում՝ 1955 թ. հասել էր 297,2 հազարի[34]։

Ինչպես երևում է թվերից, նախապատերազմյան և հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիների համեմատությամբ, հինգերորդ հնգամյակի վերջում ռեսպուբլիկայում հսկայական չափով աճել էր ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը։ Այդ աճումը արագ կերպով տեղի էր ունեցել նաև հնգամյակի տարիներին՝ 1951—1955 թվականներին։ Այսպես, եթե 1951 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատել է 248,6 հազար բանվոր-ծառայող, 1952 թ. այդ թիվը կազմում էր 256,8 հազար, 1953 թ.՝ 267,5 հազար, 1954 թ.՝ 291,1 հազար[35], իսկ 1955 թ. ինչպես տեսանք, արդեն հասել էր 297,2 հազարի։

---

[31] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, էջ 14։

[32] Նույն տեղում։

[33] Социалистическое строительство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1940, էջ 12։

[34] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник, էջ 117։

[35] Նույն տեղում։

Հնգամյակի տարիներին առանձնապես զգալի չափով աճել էր անմիջապես արտադրության մեջ աշխատողների թիվը, որն արդյունաբերության մեջ 1951 թ. 73,8 հազարից 1955 թ. հասել էր 97,6 հազարի, շինարարության մեջ՝ 25, 3 հազարից 25,8 հազարի, երկաթուղային տրանսպորտում՝ 4,900-ից 6,300-ի ՄՏԿ-ներում՝ 2,400-ից 11,700-ի, ավտոմոբիլային և տրանսպորտի այլ տեսակների մեջ՝ 10 հազարից 15,8 հազարի[36]։ Բանվորների թվի խոշոր աճում էր տեղի ունեցել նաև ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը 1951—1955 թվականներին աճեց ոչ միայն քանակապես, այլև որակապես։ Տեղի ունեցավ նրա կուլտուրական-տեխնիկական մակարդակի հետագա բարձրացում։ Արդյունաբերության և շինարարության մեջ ներդրվող նոր մեքենաները և սարքավորումները յուրացնելու և ամբողջությամբ վերցրած աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկությունների դիրեկցիաների, տեղական պարտիական, կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների կողմից զգալի աշխատանք կատարվեց արտադրության մեջ աշխատող բանվորների հանրակրթական և արտադրական գիտելիքների հարստացման ուղղությամբ։ Դրա համար տեղերում կազմակերպվեցին հարյուրավոր ու հազարավոր խմբակներ։ Բանվորների մի զգալի մասը ընդգրկվեց տեխնիկական ուսուցման խմբակներում և երեկոյան դպրոցներում։

1950—1951 ուսումնական տարում ռեսպուբլիկայում գործող բանվոր երիտասարդության 32 դպրոցներում սովորում էին 4.932 երիտասարդ, իսկ 1954—1955 ուսումնական տարում այդպիսի դպրոցների թիվը հասել էր 66-ի՝ 11.483 սովորողներով[37]։ Հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, շինարարությունը և տրանսպորտը ստացան 6.000 երիտասարդ բանվորներ և մասնագետներ, որոնք սովորել էին տեխնիկական և ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում[38]։ Իսկ գյուղատնտեսությունը ստացավ ավելի քան 5.000 մեխանիզատորներ և 6.200 տրակտորիստներ, որոնք պատրաստվել էին աշխատանքային ռեզերվների սիստեմում, տարբեր դպրոցներում և կուրսերում[39]։

Տեխնիկական ուսուցման խմբակների, արտադրության առաջավորների փորձի ուսումնասիրման և հանրակրթական դպրոցների միջոցով բարձրացնելով իրենց կուլտուրական և տեխնիկական մակարդակը, ռեսպուբլիկայի արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի մեջ և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում աշխատող հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորներ 1951—1955 թվականներին ավելի հմուտ կերպով տիրապետեցին արտադրության տեխնիկային, մեքենայական բարդ սարքավորումներին և ակտիվ դեր կատարեցին արտադրության բարձրացման գործում։

Հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունն առանձնապես մեծ չափով համալրվեց միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող կադրերով։ Եթե չորրորդ հնգամյակի վերջում՝ առ 1-ը հուլիսի 1950 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատում էր բարձրագույն կրթությամբ

[36] Նույն տեղում, էջ 117—118։
[37] Նույն տեղում, էջ 152։
[38] Նույն տեղում, էջ 120։
[39] Նույն տեղում։

16.200 մասնագետ (դրանցից 2.000-ը գյուղատնտեսներ էին, անասնաբույժներ և անասնաբույծներ, 2.300-ը՝ բժիշկներ, 7.400-ը՝ մանկավարժներ), ապա հինգերորդ հնգամյակի նախավերջին տարում, առ մեկը ապրիլի 1954 թ., ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում զբաղված բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը հասել էր 22.900-ի, որից 2.600-ը գյուղատնտեսներ, անասնաբույժներ և անասնաբույծներ էին, 2.700-ը բժիշկներ և 11.200-ը մանկավարժներ[40]։ Ոչ պակաս չափով աճել էր նաև ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը։ Եթե առ 1-ը հունվարի 1941 թ. դրանց թիվը կազմում էր 12.100, ապա առ 1-ը ապրիլի 1954 թ. այդ թիվը արդեն հասել էր 18.300-ի[41]։

Այսպիսով, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից ժողովրդի նկատմամբ ցուցաբերած մշտական հոգատարության և ձեռք առած մի շարք կարևորագույն միջոցառումների շնորհիվ հինգերորդ հնգամյակի տարիներին հետագա բարելավում տեղի ունեցավ ամբողջ սովետական ժողովրդի, այդ թվում և հայ ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ։ Այդ գործում կարևորագույն նշանակություն ունեցան ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի՝ հնգամյակի տարիներին ընդունած չորս որոշումները մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների իջեցման մասին, որոնք ժողովրդի կողմից ընդունվեցին մեծ խանդավառությամբ և հսկայական չափով նպաստեցին հնգամյակի խնդիրների կատարման համար ծավալված աշխատանքային վերելքին։

Ընդգծելով հինգերորդ հնգամյակի տարիներին ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ ձեռք բերած հաջողությունները ամբողջ երկրում, ՍՄԿՊ 20-րդ համագումարը միաժամանակ նշեց, որ «...մեզանում դեռևս սպառման առարկաների լիառատություն չկա, բնակարանների պակաս կա, դեռևս չեն լուծված աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման հետ կապված շատ լուրջ հարցեր։

...Ուստի չնայած մեր ժողովրդի նյութական բարեկեցության զգալի աճին, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը դեռ շատ բան պետք է անեն, որպեսզի բնակչության կենսամակարդակը հասցնեն այնպիսի բարձրության, որը համապատասխաներ սոցիալիստական կարգի հնարավորություններին և սովետական մարդկանց հարաճուն պահանջմունքներին»[42]։

Այդ նպատակով ՍՄԿՊ 20-րդ համագումարում հաստատված վեցերորդ հնգամյակի վերաբերյալ Դիրեկտիվներում նախատեսվեց մի շարք լուրջ միջոցառումներ։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հետագա տարիներին նոր, ավելի մեծ հաջողություններ ձեռք բերվեցին ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում։

---

[40] Նույն տեղում։

[41] Նույն տեղում։

[42] Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի 20-րդ համագումարին, էջ 109։